ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-188 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի համաձայն:

Հաշվետվությունն ընդգրկում է 2010թ. օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան):

Հաշվետու ժամանակաշրջանում գործողության մեջ է եղել «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 31-ի ՀՕ-124-Ն օրենքը: «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե ծրագրի գործողության ժամկետը լրանալուց հետո նոր ծրագիր չի ընդունվում, ապա շարունակում է գործել նախորդ ծրագիրը:» և «Նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերությունները (ձեռնարկությունները) և «փոքր» օբյեկտները նոր ծրագրի մասն են վերջինիս ուժի մեջ մտնելու պահից:»: Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցման նոր ծրագիր չի ընդունվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝

1) Հաշվետվությունը ներկայացվում է որպես հաշվետու ժամանակաշրջանում իրականացված մասնավորեցման գործարքների ամփոփում.

2) հաշվետու ժամանակաշրջանում իրականացված մասնավորեցման գործարքները վերաբերում են նաև մասնավորեցման նախորդ ծրագրերում ընդգրկված ընկերություններին և մասնավորեցման օբյեկտներին:

Հաշվետու ժամանակաշրջանում Ծրագրում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնած օրենսդրական փոփոխությունները և իրականացրած միջոցառումներն ուղղված են եղել Ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում բաժնետոմսերի ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է Ծրագրում ընդգրկված 4 ընկերություն:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցումից ստացված միջոցները կազմել են 585,7 մլն դրամ, որից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի սեփականաշնորհման հաշվին մուտքագրվել է 433,3 մլն դրամը:

Համաձայն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» (ՀՕ-128-Ն), «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» (ՀՕ-127-Ն) և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (ՀՕ-126-Ն) Հայաստանի Հանրապետության օրենքների՝ 2010 թվականի ընթացքում մասնավորեցումից ստացված միջոցներից համայնքների բյուջեներ է փոխանցվել 152,4 մլն դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված կարգով յուրաքանչյուր մասնավորեցվող ընկերության և գույքի վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) ինտերնետային կայքում հրապարակվել է համապատասխան տեղեկատվություն:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

2.1. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

2.1.1. Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցման կատարողականը

Հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է Ծրագրում ընդգրկված 4 ընկերություն: Ընկերություններից 3-ի բաժնետոմսերը վաճառվել են նախապես հայտնի գնորդներին, մեկինը՝ աշխատավորական կոլեկտիվին:

Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված «Մարտունու ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՊՓԲԸ և «Ավտոճանապարհային մեքենաներ» ՊՓԲԸ համար Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով ներդրումային և պայմանագրային այլ պարտավորություններ չեն սահմանվել:

«Ավտոճանապարհային մեքենաներ» ՊՓԲԸ դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 237-Ն որոշմամբ ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվող գույքի խորհրդանշական գին է սահմանվել 100 դրամը, պայմանով, որ գնորդը պահանջի իրավունքի զիջման մասին պայմանագրով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից կգնի Համաշխարհային բանկի ծրագրով ընկերության նկատմամբ պետության ունեցած վարկային պահանջը՝ 2217000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ զեղչված գնով, պարտավորվելով գնի վճարումը կատարել 30 տոկոսի չափով՝ միանվագ, իսկ 70 տոկոսի և մնացորդի նկատմամբ՝ տարեկան 2% տոկոսադրույքով հաշվարկվող տոկոսագումարի չափով՝ մասնավորեցման պայմանագրի կնքումից հետո՝ հինգ

տարվա ընթացքում՝ հավասարաչափ տարեկան վճարումներով:

Հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված ընկերությունների և դրանց գնորդների ստանձնած ներդրումային պարտավորությունների մասին տեղեկությունները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված ընկերությունների մասին

N	Ընկերության (պետական գույքի) անվանումը, ծածկագիրը՝ ըստ Ծրագրի	Հասցեն	ՀՀ նախարարությունը, պետական կառավարման մարմինը	ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Պետական գույքի գնահատված արժեքը (հազ. դրամ)	Վաճառքի գինը (հազ. դրամ)	Ընկերության պարտավորությունները (հազ. դրամ)	Ներդրումային և այլ պարտավորությունները՝ ըստ մասնավորեցման պայմանագրի	Մասնավորեցման պայմանագրի կնքման ամսաթիվը	Գնորդը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	«Մարտունու ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՊՓԲԸ (90056)	քաղ. Մարտունի, Գետափնյա 1 (Սայաթ-Նովայի 36)	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1253-Ն 06.11.2009թ.	358	358	1048	-	16.03.2010թ.	Աշխատավորական կոլեկտիվ
2.	«Ավտոճանապարհային մեքենաներ» ՊՓԲԸ (90054)	Արմավիրի մարզ, Ձվարթնոց, գ. Նորակերտ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 237-Ն 14.01.2010թ.	792654.5	100 դրամ	894898.5	-	03.05.2010թ.	Նախապես հայտնի գնորդ «ԴԱՐԴԱՆ» ՍՊԸ
3.	«Երևանի բեռնման և բեռնաթափման ուղեմաս» ՓԲԸ (60362)	քաղ. Երևան, Արարատյան 95	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 923-Ն 22.07.2010թ.	961870	480935	3208	Երեք տարիների ընթացքում՝ 150 մլն դրամի չափով ներդրումներ՝ յուրաքանչյուր տարի համամասնորեն՝ 50 մլն դրամի չափով	26.08.2010թ.	Նախապես հայտնի գնորդ «Ապավեն» ՍՊԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
4.	«Ռադիո» ՓԲԸ (90020)	Գեղարքունիքի մարզ, գ.Նորատուս	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1571-Ն 02.12.2010թ.	1175212	587606	26012	I տարում՝ 40 մլն դրամ ներդրում և 1800 մարդ/ամիս աշխատատեղ՝ 100 հազ.դրամ ամսական աշխատավարձով, II տարում՝ 60 մլն դրամ ներդրում և 1800 մարդ/ամիս աշխատատեղ՝ 100 հազ.դրամ ամսական աշխատավարձով: Միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների պատվերով ռադիոծրագրերի հեռարձակումը նախապես համաձայնեցնել ՀՀ կառավարության լիազոր մարմնի հետ և 10 տարվա ընթացքում պահպանել ընկերության գործունեության պրոֆիլը:	28.12.2010թ.	Նախապես հայտնի գնորդ «Եվրո Պրեսս Գրուպ» ընկերություն

2.1.2. Մասնավորեցման գործարքների արդյունքում ստանձնած պարտավորությունները, դրանց կատարումը

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցված ընկերությունների և մասնավորեցման օբյեկտների նոր սեփականատերերը ներդրումային և սոցիալական պարտավորություններ են ստանձնել հետմասնավորեցման տարիների համար:

Պետական գույքի մասնավորեցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորվում է նաև մասնավորեցման սուբյեկտների ստանձնած պարտավորությունների կատարմամբ, որոնք վերահսկվում են Վարչության կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական գույքի մասնավորեցման պայմանագրերով Վարչության վերահսկողության ներքո է գտնվել 18 գնորդների ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը, որոնց ստանձնած ներդրումային պարտավորությունները կազմել են 164300 հազար Հայաստանի Հանրապետության դրամ և 10 մլն ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների ապահովման մասով նախատեսվել է 2010 թվականի ընթացքում ստեղծել 1133 աշխատատեղ:

Հաշվետու ժամանակաշրջանում Վարչության կատարած ուսումնասիրությունների արդյունքներով պայմանագրային պարտավորությունները կատարել է 15 գնորդ, որոնց կատարած ներդրումները կազմել են 257 254,1 հազար Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ սոցիալական երաշխիքների ապահովման մասով՝ նշված գնորդների կողմից ստեղծվել է 1154 աշխատատեղ:

Հաշվետու ժամանակաշրջանում նախատեսված պայմանագրային պարտավորությունները չի կատարել մեկ գնորդ, որի չկատարած ներդրումները կազմել են 100 հազար Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ սոցիալական երաշխիքների մասով՝ չի ստեղծվել 36 աշխատատեղ:

Երկու գնորդ 2010 թվականի համար ստանձնած պայմանագրային պարտավորությունների (10 մլն ԱՄՆ դոլար ներդրումներ կատարելու և 100 աշխատատեղ ստեղծելու վերաբերյալ) կատարման ժամկետները երկարաձգել է պայմանագրերում փոփոխություններ կատարելու միջոցով:

Գնորդների ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման հիմնական պատճառներից են եղել տնտեսական ճգնաժամը և գնորդների ներկայացրած գործարար ծրագրերի ոչ իրատեսական լինելը:

Նախորդ տարիներին և հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցված ընկերությունների և օբյեկտների գնորդների՝ հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման մասին տեղեկությունները, ըստ առանձին ընկերությունների և օբյեկտների, ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

մասնավորեցված ընկերությունների և անավարտ շինարարության օբյեկտների գնորդների ստանձնած՝ հաշվետու ժամանակաշրջանում ժամկետները լրացած ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման մասին

Հ/Հ	Ընկերության (մասնավորեցման օբյեկտի) անվանումը, հասցեն, պայմանագրի համարը և ամսաթիվը	Մասնա-վորեցման ձևը, գինը (հազ. դրամ)	Պայմանագրային պարտավորությունները	Պարտավո-րությունների կատարման ժամկետը	Պարտավորության կատարումը՝ ըստ հաշվետվության
1	2	3	4	5	6
1	«Ատոմսեյսմանախագիծ» ՓԲԸ ինժեներալաբորատոր մասնաշենքի համար նախատեսված ԱՇՕ ք.Երևան, Պարույր Սևակի 9: «ԻՏԱՐԿՈ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ ք.Երևան, Մամիկոնյաց 40: 173-Մ 07.04.2003թ, (Համաձայնագիր՝ 18.02.2008թ.)	մրցույթ 27 800,0	Օբյեկտի շինարարության ընթացքում ապահովել ոչ պակաս, քան 3,0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրում, շինարարության ընթացքում ստեղծել 100 աշխատատեղ:	31.12.2010 31.12.2010 31.12.2011	Կատարվել է պայմանագրի փոփոխություն:
2	Նոյեմբերյան քաղաքի Զ. Անդրանիկի 6 հասցեում գտնվող Նոյեմբերյանի կինոցանցի գույք, այդ թվում՝ 439,9 ք.մ մակերեսով տարածք Կաքավիկ Ղուշչյան Տավուշի մարզ, գ.Պռոշյան: 847-Ու 03.08.2007թ.	ուղղակի վաճառք 2 622,0	Կատարել 20,0 մլն. դրամի ներդրում:	06.09.2010	Կատարվել է 22,0 մլն դրամի ներդրում:
3	«Սևան» հանքային ջրերի գործարան» ՊՓԲԸ 100% բաժնետոմսեր («Սևան»հանքային ջրերի գործարան» ԲԲԸ) ք. Գավառ, Սայաթ-Նովա 73: Ռաֆիկ Ղազազյան ք. Գավառ, Պետրովի փող., տ.5: 254-Մ 17.11.2005թ. (Պայմանագրի փոփոխություն 15.12.2008թ.)	մրցույթ 6 100,0	Ապահովել աշխատատեղով 360 մարդ/ամիս՝ 35 000 դրամ միջին ամսական աշխատավարձով:	23.11.2010	Ապահովվել է աշխատատեղերով 363 մարդ/ամիս՝ 36274 դրամ միջին ամսական աշխատավարձով

1	2	3	4	5	6
4	«Ախուրյանի ավտոտրանսպորտ» ՊՓԲԸ գույքի կազմից առանձնացված Թալինի տեղամասի գույք, այդ թվում՝ 393,7 ք.մ մակերեսով շենք Արագածոտնի մարզ, ք. Թալին: Շանթ Խաչատրյան ք.Գյումրի, Հաղթանակի պող. 2շ., բն.10: 257-Մ 23.12.2005թ. (Պայմանագիր՝ 15.12.2008թ.) Գնորդ՝ «Շանթ» ՍՊԸ Թալին ավան, Շահումյան 4/27:	մրցույթ 2 100,0	Ապահովել աշխատատեղով 240 մարդ/ամիս՝ 50 000 դրամ միջին աշխատավարձով:	15.12.2010	Ապահովվել է աշխատատեղերով 242 մարդ/ամիս՝ 57700 դրամ միջին աշխատավարձով:
5	«Մեխանիզատոր» ՓԲԸ 80% բաժնետոմսեր («Մեխանիզատոր» ԲԲԸ) ք. Երևան, Արցախի 47: Հայկ Մարգարյան ք.Երևան, Նոր-Արեշ, փող. 15, տուն 18: 277-Մ 11.07.2007թ.	մրցույթ 14 060,0	Ապահովել 25 աշխատատեղ՝ 40 000 դրամ աշխատավարձով:	11.07.2010	Ապահովվել է 25 աշխատատեղ՝ 40 000 դրամ աշխատավարձով:
6	«Սիսիանի գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ 100% բաժնետոմսեր Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Իսրայելյան փող.: Աշխատավորական կոլեկտիվ: 849-Ու 11.01.2008թ.	ուղղակի վաճառք 5 433,0	Կատարել 2,0 մլն դրամի ներդրում, ապահովել 4 աշխատատեղ՝ 25 000 դրամ աշխատավարձով:	11.01.2010 11.01.2010	Կատարվել է 3 750,0 հազ. դրամի ներդրում, ապահովվել է 4 աշխատատեղ՝ 26 000 դրամ աշխատավարձով:
7	«Անդրոն» գիտահետազոտական ինստիտուտ-տեխնոպարկ» ՓԲԸ 100% բաժնետոմսեր ք. Երևան, Մանանդյան 33: «ՍՆԱՌՏ» ՍՊԸ, ք.Երևան, Հ. Հովսեփյան 31: 854-Ու 21.03.2008թ.	ուղղակի վաճառք 94 092,0	Կատարել 17,0 մլն դրամի ներդրում, ապահովել 120 մարդ/ամիս աշխատատեղ՝ 90 000 դրամ միջին աշխատավարձով:	21.03.2010 21.03.2010	Կատարվել է 18,0 մլն դրամի ներդրում, ապահովվել էաշխատատեղերով 239 մարդ/ամիս՝ 91 800 դրամ միջին աշխատավարձով:
8	Երևան քաղաքի Զրվեժ թաղամասում գտնվող Վարդաշենի բազալտի հանքավայրի՝ 334,7 քմ մակերեսով շենքեր և 552,9 քմ մակերեսով շինություններ «Վարդաշենի հանք» ՍՊԸ, ք. Երևան, Վարդաշենի հանք: 853-Ու 31.01.2008թ.	ուղղակի վաճառք 3 400,0	Կատարել 8,0 մլն դրամի ներդրում, ապահովել 3 աշխատատեղ:	31.01.2010 31.01.2010	Կատարվել է 8,0 մլն դրամի ներդրում, ապահովվել է 5 աշխատատեղ:

1	2	3	4	5	6
9	Գյումրի քաղաքի Սավոյան 7 հասցեում գտնվող ՀՊՃՀ-ի Գյումրու մասնաճյուղի ուսումնալաբորատոր մասնաշենքի ԱՇՕ Մակի Փանոսյան ք. Գյումրի, Խանջյան 4շ., բն. 1: 246/1-Մ 22.07.2008թ.	մրցույթ 3 637,0	Կատարել 4,0 մլն դրամի ներդրում:	22.07.2010	Կատարվել է 4 316,2 հազ. դրամի ներդրում:
10	«Դվին» հյուրանոցային համալիր» ՓԲԸ ք. Երևան, Պարոնյան փող. 40: «Կովկասյան կոմունիկացիոն խումբ» ՓԲԸ ք. Երևան, Սարյան 20: 686-Ու 14.05.2004թ. (Պայմանագրի փոփոխություն՝ 04.02.2010թ.)	ուղղակի վաճառք 100 000 ԱՄՆ դոլար	Կատարել 7,0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրում:	31.12.2010	ՀՀ կառավարության որոշմամբ կատարվել է պայմանագրի փոփոխություն:
11	«Կոմետա - 1» ԲԲԸ 80% բաժնետոմսեր ք. Աշտարակ, Գիտավան-2: Աշխատավորական կոլեկտիվ: 855-Ու 09.04.2008թ.	ուղղակի վաճառք 41 036,0	Կատարել 18,0 մլն դրամի ներդրում, ապահովել աշխատատեղով 120 մարդ/ամիս՝ 70 000 դրամ միջին աշխատավարձով:	09.04.2010 09.04.2010	Կատարվել է 51,0 մլն դրամի ներդրում, ապահովվել է աշխատատեղերով 140 մարդ/ամիս՝ 70 420 դրամ միջին աշխատավարձով:
12	«Ռեմդիզել» ՓԲԸ Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ: «ԲԻԶՆԵՍ ԼԱՅՆ» ՍՊԸ, ք. Երևան, Նոր-Արեշ 24 փող. տուն 29 857-Ու 13.08.2008թ.	ուղղակի վաճառք 153 366,0	Կատարել 25,0 մլն դրամի ներդրում:	25.08.2010	Կատարվել է 66 460,9 հազ. դրամի ներդրում:
13	Վանաձոր քաղաքի Մաշտոցի թիվ 1 հասցեում գտնվող՝ 5264,74 քմ մակերեսով «Վանաձորի հյուրանոց» ԱՇՕ Սամվել Գրիգորյան գ.Գուգարք, 10-րդ փող., տուն 27ա: 859-Ու 20.01.2009թ.	ուղղակի վաճառք 42 366,0	Կատարել 40,0 մլն դրամի ներդրում:	20.01.2010	Կատարվել է 40 437,0 հազ. դրամի ներդրում:
14	«Շիրակ» հյուրանոցի շենք և գույք: ք. Երևան, Մ. Խորենացու 13ա: «Շիրակ» ՍՊԸ 160-Ու 07.08.2001թ. (Պայմանագրի փոփոխություն՝ 29.09.2005թ.)	ուղղակի վաճառք 500 000 ԱՄՆ դոլար	Ապահովել 51 աշխատատեղ՝ 50 000 դրամ միջին աշխատավարձով:	31.12.2010	Ապահովվել է 52 աշխատատեղ՝ 64400 միջին աշխատավարձով:
15	«Վանաձորի բաղնիքային տնտեսություն» ՊՓԲԸ 100% բաժնետոմսեր ք. Վանաձոր, Մյասնիկյան 2: Սեյրան Աղաբեկյան ք. Վանաձոր, Գր. Լուսավորչի տուն 33-8: 845-Ու 17.05.2007թ.	ուղղակի վաճառք 2 244,0	Կատարել 30,0 մլն դրամի ներդրում:	17.05.2010	Կատարվել է 43 080,0 հազ. դրամի ներդրում:

1	2	3	4	5	6
16	«Հրազդանի ավտոտեխսպասարկման կայան» ՓԲԸ 80% բաժնետոմսեր («Հրազդանի ավտոտեխսպասարկման կայան» ԲԲԸ) Կոտայքի մարզ, ք.Հրազդան,Շահումյան 1: Մանվել Սիմոնյան ք. Հրազդան, Կենտրոն թաղ., շ. 98, բն.14: 281-Մ 21.12.2007թ.	մրցույթ 1 152,0	Կատարել 200,0 հազ. դրամի ներդրում:	21.12.2010	Կատարվել է 210,0 հազ. դրամի ներդրում:
17	«Տրանսպորտային շինարարության նախագծահետազոտական ինստիտուտ» («Տրանսնախագիծ» ՓԲԸ 100% բաժնետոմսեր): ք. Երևան, Դավիթ Անհաղթի 23: Աշխատավորական կոլեկտիվ 850-Ու 23.01.2008թ.	ուղղակի վաճառք 26 052,0	Ապահովել 74 աշխատատեղ՝ 65 000 դրամ միջին աշխատավարձով:	23.01.2010	Ապահովվել է 84 աշխատատեղ՝ 74 000 դրամ միջին աշխատավարձով:
18	«Ջորագետի նավթամթերք» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր Լոռու մարզ, գ. Ջորագետ: Հուսիկ Մուրադյան Արմավիրի մարզ, գ. Արաքս: 283-Մ 29.04.2008թ.	մրցույթ 350,0	Կատարել 100,0 հազ. դրամի ներդրում, ապահովել աշխատատեղերով 36 մարդ/ամիս՝ 22 000 դրամ աշխատավարձով:	29.04.2010 29.04.2010	Ներկայացվել է հայցադիմում:

2.1.3. Ընկերությունների լուծարման և սնանկացման գործընթացը

Օրենքով սահմանված կարգով ընկերությունները չմասնավորեցվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է կայացնում այդ ընկերությունների լուծարման մասին:

Լուծարված ընկերությունների գույքը կարող է մասնավորեցվել Օրենքով սահմանված ձևերով՝ որպես գույքի առանձին տարրեր, այդ գույքի կամ դրա մի մասի հիման վրա նոր ընկերություն ստեղծելու միջոցով, ինչպես նաև տրամադրվել կարճաժամկետ կամ երկարաժամկետ վարձակալության:

Հաշվետու ժամանակաշրջանում լուծարման գործընթացում է գտնվել Ծրագրում ընդգրկված 38 առևտրային կազմակերպություն:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված կազմակերպություններից՝

ա) 3 կազմակերպության լուծարման գործընթացն ավարտվել է.

բ) 5 կազմակերպություն ճանաչվել է սնանկ:

Լուծարվող կազմակերպությունների կրեդիտորական պարտավորությունները մարելու նպատակով կազմակերպվել են մի շարք աճուրդներ, ինչպես նաև միջոցառումներ են ձեռնարկվել դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների լուծարման հանձնաժողովների կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում մարվել է շուրջ 57650,0 հազար դրամ կրեդիտորական պարտք, որից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 11278,0 հազար դրամ, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության գծով՝ 3481,0 հազար դրամ, աշխատավարձի գծով՝ 32319,0 հազար դրամ և այլ կրեդիտորական պարտք՝ 10572,0 հազար դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում լուծարման և սնանկացման գործընթացի մասին տեղեկությունները ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հաշվետու ժամանակաշրջանում լուծարման և սնանկացման գործընթացի մասին

Հ/Հ	Ծածկագիրը՝ ըստ Ծրագրի	Ընկերության (կազմակերպության) անվանումը	Հիմնադիրը	Լուծարման մասին ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Լուծարման ընթացքը
1	2	3	4	5	6
1.	60034	ՌՏԻ-ի շինվերանորոգման վարչություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1833-Ա, 17.10.2002թ..	Գտնվում է լուծարման գործընթացում:
2.	80039	«Նաիրի» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1833-Ա, 17.10.2002թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
3.	21616	«Երևանի հատուկ ՇՎՎ» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1833-Ա, 17.10.2002թ..	Գտնվում է լուծարման գործընթացում:
4.	20197	«Միջտնտշին» ՓԲԸ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 446-Ա, 23.04.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
5.	20904.3	«Գագարինի նավթամթերք» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 533-Ա, 23.04.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
6.	21881.4	«Ուտիք» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 533-Ա, 23.04.2003թ.	Սնանկ է:
7.	11037	Ղազանչիի կաթնահամալիր	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 1534-Ա, 21.11.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
8.	89	«Անալիտսարք»ԲԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1610-Ա, 04.12.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
9.	60351	«Գյումրիի քաղաքային կառույցների ուղեմաս» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1610-Ա, 04.12.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
10.	62076	Անիի գյուղ. կենդանիների արհեստական սերմնավորման միջտնտեսային ձեռնարկություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 534-Ա, 22.04.2004թ.	Լուծարված է:

1	2	3	4	5	6
11.	60216	Գորիսի հրուշակեղենի ՊՁ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 137-Ա, 10.02.2005թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
12.	62392	«Վարդենիսի գյուղ. կենդանիների արհեստական սերմնավորման կայան» ՊՁ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 137-Ա, 10.02.2005թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
13.	62005	«Հայթուրթեյդ» ՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 460-Ն, 17.02.2005թ.	Սնանկ է:
14.	20571	«Աշոցքի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 515-Ա, 28.04.2005թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
15.	15253	«Գործիքագործ» ՊՁ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
16.	5328	Իջևանի գլխավոր պանրագործարան	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 348-Ն, 23.02.2006թ	Գտնվում է լուծարման գործընթացում:
17.	12264	Գետքի ԻԹԿ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ	Գտնվում է լուծարման գործընթացում:
18.	20173	Գուգարքի ԳԱՍ ՊՁ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ	Գտնվում է լուծարման գործընթացում:
19.	11039	Փոքրաշենի բտման տնտեսություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
20.	11050	Արտամետի կերերի արտադրության տնտեսություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ	Գտնվում է լուծարման գործընթացում:
21.	60214	«Հայջրշին» ՊՓԲԸ Կապանի տնտհաշվարկային տեղամաս	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ	Գտնվում է լուծարման գործընթացում:
22.	60213	«Հայջրշին» ՊՓԲԸ Սիսիանի տնտհաշվարկային տեղամաս	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
23.	62023	«Նոր Երկիր» ՊՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Լուծարված է:
24.	60153	«Երառսպասարկում» ՓԲԸ-ի արտադրական և սովորողների Մ/Ս թիվ 7 ՊՁ	Երևանի քաղաքապետարան	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:

1	2	3	4	5	6
25.	21409	«Թալինի տպարան» ՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 843-Ն, 16.06.2006թ.	Լուծարված է:
26.	20904.10	«Բաղրամյանի նավթամթերք» ՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 475-Ա, 19.04.2007թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
27.	62390	«Հրազդանի գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 475-Ա, 19.04.2007թ.	Սնանկ է:
28.	62093	«Արարատի ճանապարհների շահագործման և շինարարական»ՊՓԲԸ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	N 728-Ա, 10.07.2008թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
29.	62196	«Զրիոս» ՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 117-Ն, 25.01.2008թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
30.	60305	«Երևանի մերձքաղաքային ուղևորատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1525-Ա, 18.12.2008թ.	Սնանկ է:
31.	20376	«Գագարինի արտադրական բազա» ՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 838-Ն, 23.07.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
32.	60044	«Աղանձոտ» ՊՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 838-Ն, 23.07.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
33.	20581.1	«Դեբեդ» հյուրանոց» ՊՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 838-Ն, 23.07.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
34.	546	«Ազաթ» արտադրակոմերցիոն ֆիրմա» ՊՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1071-Ա, 29.07.2004թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
35.	60039	«Կապանի «էլեկտրոն» ԲԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 536-Ա, 22.04.2004թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
36.	62401	«Քաջարանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 951-Ն, 20.08.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:

1	2	3	4	5	6
37.	90006	«Նոր ներդրումներ» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 227-Ա, 11.03.2010թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
38.	90001	«Կոմպոզիցիոն նյութերի գործարան» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն		Սնանկ է: Դատարանի վճիռ՝ 08.08.2008թ.

2.2. «ՓՈՔՐ» ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ

2.2.1. «Փոքր» օբյեկտների մասնավորեցման կատարողականը

Համաձայն Ծրագրի 5-րդ հոդվածի՝ մասնավորեցման նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված «փոքր» օբյեկտները համարվում են Ծրագրի մաս և ենթակա են մասնավորեցման «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ձևերով:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցվել է մեկ «փոքր» օբյեկտ (Արտավան գյուղի կենցաղի տունը):

«Փոքր» օբյեկտների մասնավորեցումից հաշվետու ժամանակաշրջանում ստացված պետական բյուջեի եկամուտները կազմել են 39 353,2 հազար դրամ: